600.0180.07.04.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2010 թվականի №180Ա

ք.Երևան

«ԼՈՐԱԳԵՏ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՍԻՍԱԿԱՆ-1» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը, 23-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» №4 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Լորագետ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի վարչական տարածքում՝ Դալիգետ գետի վրա կառուցված (բնական ջրահոսք) «Սիսական-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ 15 տարի գործողության ժամկետով:

2. Հաստատել «Լորագետ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սիսական-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները (հավելված):

3. «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Սիսիան» մասնաճյուղին ազատել 2006 թվականի հուլիսի 24-ի №41-111 գրության համաձայն «Լորագետ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սիսական-1»

փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման №0213 լիցենզիայի պայմանների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նկատմամբ ստանձնած 2 միլիոն 500 հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի օգոստոսի 11-ի «Լորագետ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սիսական-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» №169Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
7 ապրիլի 2010թ.
ժամը 16:00